ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

28 նոյեմբեր, 2014թ. ք. Երևան

Հիմնադրվեց ՔՀԿ-ների Հակակոռուպցիոն Կոալիցիա

Հայաստանում այսօրվանից գործելու է Հակակոռուպցիան կոալիցիան, որին անդամակցում է շուրջ 70 քաղաքացիական հասարակության կազմակերպություն: Նոյեմբերի 28-ին Երևանում տեղի ունեցավ Կոալիցիայի հիմնադրման արարողությունը: Միջոցառումը կազմակերպվել է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում:

Միջոցառմանը ողջույնի խոսքով հանդես եկավ «Հայաստանի երիտասարդ իրավաբաների ասոցիացիա» ՀԿ նախագահ, «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի ղեկավար Կարեն Զադոյանը, ով նաև մասնակիցներին ներկայացրեց ՔՀԿ-ների Հակակոռուպցիոն Կոալիցիա ստեղծելու Հռչակագիրը և Աշխատակարգը: Այնուհետև՝ քվեարկության արդյունքում Կոալիցիան միաձայն հիմնադրվեց, որից հետո հաստատեց 2015-2016թթ. մոնիթորինգային ծրագիրը: Այս մարմնի ստեղծումը նախադեպը չունեցող գործողություն է: Խոստովանեցին քաղաքացիական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Կոալիցիայի հիմնադրումից հետո մասնակիցները անդրադարձան նաև ՀՀ 2014-2018թթ.հակակոռուպցիոն ռազմավարության նախագծին: ՔՀԿ ներկայացուցիչները միաձայն ընդունեցին ուղերձ, որով դիմում են ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանին՝ խնդրելով ռազմավարության նախագծում ընդգրկել սոցիալական ապահովության ոլորտը, գործուն միջոցներ ձեռնարկել ապօրինի հարստացումը քրեականացնելու ուղղությամբ, ռազմավարությամբ նախատեսված Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդում ընդլայնել ՀԿ-ների կազմը՝ երկու տեղից այն դարձնել հինգ, բացի այդ միջոցներ ձեռնարկել մոտ ապագայում կոռուպցիայի դեմ պայքարի անկախ մարմնի ստեղծման ուղղությամբ:

Միջոցառման երկրորդ մասին քննարկման մասնակիցներին միացան ներկայացուցիչներ ՀՀ կառավարությունից և միջազգային կազմակերպություններից: Հայտնելով ՀՀ արդարադատության նախարարության դիրքորոշումը նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը շեշտեց, որ միայն պետական մարմինների և կառավարական կառույցների մասնակցությամբ հնարավոր չէ պայքարել կոռուպցիայի դեմ, քաղաքացիական հասարակությունը և մեր հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է իր մասնակցությունն ունենա այս գործին:

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել ՔՀԿ-ների դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում կիզորացվեն ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կկազմակերպվեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կմշակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ՀԵԻԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել. Ծրագրի հանրային կապերի համակարգող Նարինե Կարապետյանին, աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00; հեռ. 540199; ֆաքս 580299; URL http://www.ayla.am: Կատարող՝ Նարինե Կարապետյան, էլ.փոստ՝ pr@ayla.am

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
Հասցե Նալբանդյան 7, բն. 2
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 54 01 99
Հեռապատճեն: +37410 58 02 99

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 56 03 60
Հեռատճեն: +37410 56 03 60

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս +37410 54 64 94
Հեռապատճեն +37410 54 64 95

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է:

Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուժերը: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ: